Աննա Դավթյան

Հետոյի գրություն

Մտածում էի ամեն տարի հոկտեմբերին Մերիին լուսանկարել՝ դիմանկար: Բայց քանի որ Մերին հեռու գյուղում է, նրան լուսանկարելը հեշտ գործ չէ, ու քանի որ Մերին ավելի շատ իմ մեջ է, քան մեկ այլ տեղ, իմ չերևացող այն կողմն է, որ ավելի շատ բնությանն է պատկանում, քան ինձ ու դառնում է այն, ինչ ես եմ գրում նրան, որոշեցի ամեն տարի հոկտեմբերին նրա մասին գրել:

Մերին մի քանի ամիս սպասում էր «Գրեթերթին», որ կարդար իր մասին գրածս պատմվածքը. ես չէի հարմարեցնում գյուղ գնալ, մինչև մահամերձ տատիկս ուզեց ինձ տեսնել: Ես հիմա էլ համոզված չեմ՝ նա տեսա՞վ ինձ, թե՞ պարզապես նայեց, ժպտաց ինչ-որ, նրա գլուխն անընդհատ աջ էր ընկնում, ու կատակ անելու պես փակում ու բացում էր աչքերը: Նա սեղմում էր ձեռքս՝ ինչպես սեղմում են նորածին երեխաները՝ առանց գիտակցելու, նրա մարմինը դեռ փորձում էր բռնել կյանքը, ու միայն մատների մեխանիկական կծկումն էր, որ ապահովում էր այդ ճիգը: Ես ուզում էի խոսել նրա հետ, բայց նա արդեն իր ներսում ինչ-որ տեղ էր ու դուրս չէր գալիս, չգիտեմ՝ զգո՞ւմ էր, որ մատս տանում եմ բարակ երակների վրայով, որտեղ անոթները վերածվել էին հետքերի: Ես մտքում խոսում էի նրա հետ: Մերին կողքիս նստած «Գրեթերթ» էր կարդում: Նա այնքան գեղեցիկ էր:

Հետո եկավ գիշերը: Ես չէի կարողանում քնել, չգիտեի՝ գիշերվա որ պահին տատիկս կմահանա. ժամանակի մի եզրը բաց էր… Այդ ամենը չէր տեղավորվում չորրորդ չափման մեջ, ու նրա մյուս ծայրը բռնելու համար մենք անհամբեր սպասում էինք տատիկիս մեռնելուն: Ես օգնության էի կանչում Մերիին. «Մերի, տատը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է

ինտերնետը, այդպես էլ ես չեմ հասկանում այս ամենը, չի մտնում գլուխս, ես ուզում եմ հասկանալ, որտե՞ղ է այս ամենը կատարվում»: Մերին իր փոքրիկ բջջային հեռախոսով երաժշտություն միացրեց, այն նորվեգացի տղային՝ I'm in love in a fairy tale…

Առավոտյան եղբայրս զանգեց՝ ասելու, որ տատիկս մահացել է: Ես ինձ ավելի լավ զգացի: Հետո պարզապես նստած սպասում էի, որ մեքենայով գային՝ մեզ տատիկիս տուն տանելու: Մերին հերթով փորձում էր իր մուգ շորերը: Նա սև բլուզ հագավ, ջինս, երկար մազերը կապեց ու դեղին ծաղիկներով նոր թաշկինակ վերցրեց: Նա այնքան գեղեցիկ էր:

Երբ ես ու Մերին նստած լացում էինք դագաղի մոտ, տատիկիս գլուխն արդեն ավելի շատ գանգ էր, ու նրա կաշին պարզապես փռված էր ոսկորների վրա: Նրա ձեռքերն այնքան էին բարակել ու նրբացել, որ երիտասարդացել էին ու չէին համապատասխանում դեմքին: Նրա մազերը առանձին գոյություն էին: Ես ամաչում էի, որ նա մեռած է: Մերին նրա բարձի վրա թարմ քաղած դաղձի փունջ դրեց:

Հետո եկավ գիշերը: «Ես անտանելի կարոտել եմ նրան»,- ասացի Մերիին: Նա քնած էր:

Առավոտյան մեքենան նորից եկավ՝ մեզ տատիկիս տուն տանելու: Մերին կապույտ շոր էր հագել, մազերը կապել էր, ձեռքին նույն թաշկինակն էր՝ դեղին ծաղիկներով: Մենք գերեզմանոցի կողքով անցանք ու տեսանք, որ փոս են փորում: Դա չափից դուրս սարսափելի էր. տարածության մի եզրը բաց էր… ու պետք է բաց մնար այնքան, մինչև փակվեր մարմնով: Ես սկսեցի անհամբերությամբ սպասել, թե երբ է թաղվելու տատիկս: Մերին կողքիս էր:

Սենյակում այնքան մարդ կար, որ ես ու Մերին գնացինք մյուս սենյակ, որտեղ տատիկս քնում էր: Երբ գնում էի գյուղ, միշտ նրա հետ էի քնում, ու նրա այս կարմիր վերմակը անտանելիորեն հարազատ է ինձ ու այնքան միայնակ է հիմա: Ու միայնակ է ձեռնափայտը՝ անկյունում դրված, միայնակ է սրբապատկերը, որ կախված է պատին, ու միայնակ է սենյակը: Մերին նորից ձեռքն է վերցրել այն օրվանից աթոռին մնացած «Գրեթերթը», կարդում է ու հարցնում, թե էդ երբ եմ

իրեն կանաչ սպորտային կոշիկներ նվիրել, որ ինքը չի հիշում:

Նվագում են: Ես զզվում եմ այս աղիողորմ երաժշտությունից: Եթե թաղման կազմակերպումն իմ ձեռքում լիներ, ես ինքս կերգեի տատիկիս համար: Բայց բարեկամներս ասացին. «Խայտառա՞կ ես»: Միշտ էլ բարեկամները չգիտեն՝ ինչպես պահել իրենց, ու պահում են այնպես, ինչպես ընդունված է: Ես ու Մերին երգեցինք սենյակում, հետո դուրս եկանք թափորի հետևից ու կանգնեցինք բակում:

Տատիկս պառկած էր սեղանին, քահանան աղոթում էր, կանայք, ուսերի վրայով հետ նայելով, բառեր էին փոխանակում, տղամարդիկ նայում էին երկինք, անձրև էր գալիս, հորեղբայրս նշան արեց, որ վերցնեն դագաղը, տատիկս պտտվում էր օդում, նա նոր կոշիկներ էր հագել, հորաքույրս սկսեց ավելի բարձր լացել, ամեն ինչ այնքան էլ անսովոր չէր, հետո շրջվեցի ու տեսա, որ Մերին շոյում է գետնին պառկած փոքրիկ շանը:

Տարածության եզրը փակվեց: Ես չտեսա՝ ինչպես: Հանգստի քարից հետո կանայք չեն մտնում գերեզմանատուն: Ես ու Մերին երեք օր հոգեհացի սեղան դրինք ու հավաքեցինք: Շատ էինք հոգնել: Ահավոր հոգնել ու մոռացել էինք տատիս:

Երեք օր հետո առավոտյան Մերին ասաց, որ «Գրեթերթը»դրել է տատիս հետ՝ խցկել է նրա բարձի տակ: Ես ապշել էի: Նա մեղադրում էր ինձ, որ ես այնքան ուշացա, որ տատս չհասցրեց կարդալ, ինքն էլ դրել է, որ այնտեղ կարդա: Բայց ե՞րբ էր դրել, մենք ամբողջ ընթացքում միասին էինք: Ես փորձեցի կանխատեսել հետևանքները, որ կարող էր ունենալ տատիս հետ թաղված թերթը: «Մերի, այդ թերթն ընդամենը երկու տարի է, որ կա, ու մի փառավոր վիճակում էլ չի, կարո՞ղ է քո պատճառով փակվի»: Հետո փորձեցի հիշել, թե ովքեր էին այդ համարում տպագրվել: Չեմ հիշում: Հիշում եմ, որ ձեռքերն էինք նկարել, իմ ձեռքն էլ ինչ-որ շատ էր այլ աշխարհից: Այսինքն տպագրությունն այնքան վատն էր, որ բոլորիս ձեռքերն էլ այնկողմնային էին թվում: Մեղա եմ Աստծո: «Մերի, գուցե սա նոր սկզբի նշա՞ն է»: Մերին աչքերն է տրորում ու ժպտում է: